# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 651Ա

16 ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

**<<ԱՆԱՀԻՏ-260>> ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ-ՄԱՐԳԱՐԱ ԽՃՈՒՂԻ 5/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 0.235ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել <<Անահիտ-260>> արտադրական անասնապահական կոոպերատիվի նախագահ, Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 10 շենքի թիվ 8 բնակարանի բնակիչ Նորիկ Հայկազի Միրզախանյանը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վաղարշապատ-Մարգարա խճուղի թիվ 5/4 հասցեում գտնվող, <<Անահիտ-260>> արտադրական անասնապահական կոոպերատիվին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 10.10.1991թ. կնքված պայմանագիր, 12.10.1991թ. կազմված ակտ/ անասնաշենքի, դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի իրավունքի վերականգման խնդրանքով:

Հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207, 564 հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վաղարշապատ-Մարգարա խճուղի 5/4 հասցեում գտնվող <<Անահիտ-260>> արտադրական անասնապահական կոոպերատիվին սեփականության իրավունքով պատկանող անասնաշենքի, դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.235հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նկատմամբ իրավունքը վերականգնել համաձայն <<Ավագ Ավագյան Գագիկի>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 28.04.2022թ. կազմված հատակագծի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТА
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 652-Ա

«16» ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԲ.Մ.ՄԱՇՏՈՑ 8Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՈՉ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԷԴՎԻՆ ՀՈՎՍԵՓԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 03/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 8Ա հասցեում գտնվող Էդվին Հովսեփի Նավասարդյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունը օրենդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու մասին, **պարզեց, որ**

Էդվին Հովսեփի Նավասարդյանը (հասցե՝ ք.Էջմիածին, Հովհաննես Շիրազի / Պիոներական/ փողոց, թիվ 66 տուն, անձնագիր՝AU0640128, տրված 07.03.2022թ-ին 057-ի կողմից, ՀԾՀ՝ 1107700426) թույլ տալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտում ենթադրող արարք՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 8Ա հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության շենք և շինությունը օրենդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ օգտագործում է ոչ նպատակային, մասնավորապես, բնակելի շինությունն օգտագործում է որպես խանութի մթերային ապրանքների պահեստ, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանք, ինչի կապակցությամբ, Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 21.03.2024 թվականին թիվ 1 արձանագրության հիման վրա, 2024 թվականի մարտի 21-ին ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում Էդվին Հովսեփի Նավասարդյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել լսում անցկացնելու վայրի և ժամանակի մասին:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը</u>

- Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 21.03.2024 թվականին կազմված թիվ 1 արձանագրությունը և տեղազննության ակտը:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- 2024 թվականի մարտի 27-ի թիվ 1590 ծանուցագիրը՝ ոչ նպատակային օգտագործումը դադարեցնելու և իրավախախտման հետևանքները վերացնելու ու վարչական նիստի լսումներին ներկայանալու վերաբերյալ:
- Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 8Ա հասցեում գտնվող շինության 24.01.2022թ.-ի թիվ 24012022-04-0054 սեփականության վկայականի պատճենը:

- Հանձնաժողովի 09.04.2024թ. թիվ 03/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 8Ա հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության շենք և շինությունն Էդվին Հովսեփի Նավասարդյանի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ օգտագործվում է ոչ նպատակային՝ բնակելի շինությունն օգտագործվում է որպես խանութի մթերային ապրանքների պահեստ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի մարտի 21-ին Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 ապրիլի 9-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Էդվին Հովսեփի Նավասարդյանը /հիմք՝ փոստային ծանուցագիր ALO121951558AM/:

Վերջինս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ:

Տվյալ պարագայում Էդվին Հովսեփի Նավասարդյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 8Ա հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության շենք և շինությունը, օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ օգտագործվում է ոչ նպատակային՝ բնակելի շինությունն օգտագործելով որպես խանութի մթերային ապրանքների պահեստ, իսկ 2024 թվականի մարտի 27-ի թիվ 1590 ծանուցմամբ ոչ նպատակային օգտագործումը դադարեցնելուն և իրավախախտման հետևանքները վերացնելուն ուղղված վարչական մարմնի պահանջները վարույթի մասնակցի կողմից թողնվել են անկատար, որպիսի փաստը պետք է հաշվի առնել տույժ նշանակելու հարցը և դրա չափը որոշելիս:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝ հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության. *<u>կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ</u>*. պատճառվել է, արդյոք, գույքային վնաս, հիմքեր կան, արդյոք,

վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի 06.07.2023թ. թիվ 1148Ա որոշմամբ Էդվին Հովսեփի Նավասարդյանը նույն իրավախախտման համար տուգանվել է՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ** գումարի չափով, սակայն չի դադարեցրել իրավախախտումը և չի վերացրել իրավախախտման հետևանքները:

Տվյալ դեպքում, համադրելով գործով առկա փաստերը կիրառման ենթակա օրենսդրության հետ, գալիս ենք այն եզրահանգման, որ Էդվին Հովսեփի Նավասարդյանը, ծանուցվելով հարուցված վարչական վարույթի և իրավախախտումը ու դրա հետևանքները վերացնելու օրինական պահանջի մասին, նախկինում տուգանված լինելով նույն իրավախախտման համար, միջոցներ չի ձեռնարկել իրավախախտումը դադարեցնելու ուղղությամբ, ավելին՝ չի ներկայացել լսումներին, ***որպիսին գնահատվում է որպես վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք***, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում որպես պատասխանատվության միջոց, տուգանքը պետք է սահմանել առավելագույն՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 152.2-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 279-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էդվին Հովսեփի Նավասարդյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ** գումարի չափով՝ Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 8Ա հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության շենք և շինությունը օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու համար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատարան կարգով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 653Ա

«16» ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՑԱՆԿԱԼԻ՝ ՎՆԱՍՎԱԾ, ՉՈՐԱՑԱԾ ԲՆՈՎ ԵՎ ԱՆՈՐԱԿ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, 42-րդ հոդվածի առաջին մասին 15-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկի տնօրեն Մ. Աբրահամյանի 12.04.2024թ.-ի թիվ 32 զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում (Էջմիածին քաղաք և գյուղ Ոսկեհատ) բարեկարգման աշխատանքների ապահովման համար հատել /հեռացնել/ անցանկալի՝ չոր, չորացող, քամուց և ձյունից կոտրատված, հիվանդություններով և վնասատուներով վարակված, անորակ բնով և սաղարթով ծառերը:

2. Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում (Էջմիածին քաղաք և գյուղ Ոսկեհատ) անցանկալի ծառերի հատման /հեռացման/ աշխատանքների կատարումը հանձնարարել Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 654-Ա

«18» ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿՈԲ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՊԱՐԱ ԱՏԼԵՏԻԿԱՅԻ 2024Թ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՄԱՆ ԿԱՐՈՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ թիվ 3 արտահերթ նիստի թիվ 24 որոշումը, և հաշվի առնելով Հայաստանի Ազգային Պարալիմպիկ կոմիտեի նախագահ Հակոբ Աբրահամյանի դիմումը, Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի պարա աթլետիկայի հավաքականի թիմի մարզիկ Արման Կարոյի Սարգսյանի՝ Ճապոնիայի Կոբ քաղաքում անցկացվող պարա աթլետիկայի 2024թ աշխարհի առաջնությանը մասնակցելու համար ֆինանսական աջակցություն ստանալու խնդրանքով.

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեով նախատեսված <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածից /հոդ. 4727/՝ Ճապոնիայի Կոբ քաղաքում անցկացվող պարա աթլետիկայի 2024թ աշխարհի առաջնությանը մասնակցելու համար, Չարենց 17 շենքի 8 բնակարանի բնակիչ Արման Կարոյի Սարգսյանին հատկացնել 100.0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Թ Ի Վ   655Ա

18 սեպտեմբերի 2024թ.                                                                 ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 73/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 20.12.2023թ. թիվ 2261Ա որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձանց՝ Պետրոս Կարապետի Հովհաննիսյանին և Անի Պետրոսի Հովհաննիսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 73/1 հասցեում գտնվող՝ 5.3քմ / 5.3քմ արտաքին և 5.3քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0037հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
Անի Պետրոսի Հովհաննիսյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ իր և իր վստահորդի անունից գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 5.3քմ / 5.3քմ արտաքին և 5.3քմ ներքին/ մակերեսով պարիսպը 17 734 / տասնյոթ հազար յոթ հարյուր երեսունչորս / ՀՀ դրամ և 0.0037հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 106 838 / հարյուր վեց հազար ութ հարյուր երեսունութ / ՀՀ դրամ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պետրոս Կարապետի Հովհաննիսյանին և Անի Պետրոսի Հովհաննիսյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 73/1 հասցեում գտնվող՝ 5.3քմ / 5.3քմ արտաքին և 5.3քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0037հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Պետրոս Կարապետի Հովհաննիսյանի և Անի Պետրոսի Հովհաննիսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ,ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ                    Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 656-Ա

18 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 18 շենքի թիվ 64 բնակարանի բնակիչ՝ Արմեն Ալբերտի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լ. Ազգալդյան /նախկին Վ. Կոստանյան/ փողոցի թիվ 5/73 և Լ. Ազգալդյան փողոցի թիվ 5/74 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 26062019-04-0050 տրված՝ 26.06.2019թ., թիվ 16072019-04-0032 տրված՝ 16.07.2019թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04999G6FDBWC/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Լ. Ազգալդյան փողոց թիվ 10 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ՝
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 657-Ա

« 19 » ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով, ուսումնասիրելով ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի «19» ապրիլի 2024 թ. կազմված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4-ով ընդունված որոշմամբ «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Գնահատող հանձնաժողովի ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովը Պատվիրատուի ղեկավարին է ներկայացրել «19» ապրիլի 2024 թ. կազմված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4-ը, որով հայտնել է հետևյալը.

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի կարիքների համար 2024 թվականի մարտի 26-ին հայտարարված Ընթացակարգի 1 – 3-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հակոբ Սոսյան» ԱՁ-ն, որի հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է ընտրված մասնակից (ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտ և ամենացածր գին, «02» ապրիլի 2024 թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2):

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուն տեղեկագրում «03» ապրիլի 2024 թ. հրապարակել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին և անգործության ժամկետ սահմանել 2024 թվականի ապրիլի 4-ից 13-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը («18» ապրիլի 2024 թ.) Պատվիրատուն ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

2024 թվականի ապրիլի 18-ին ստացվել է «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի գրությունն առ այն, որ ընկերությունը հրաժարվում է կնքել ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գնահատող հանձնաժողովը «19» ապրիլի 2024 թ. որոշում է ընդունել «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի պահանջներով, առաջարկել է դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հիմքերը՝ «Հակոբ Սույան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար։

2. «Հակոբ Սույան» ԱՁ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Հակոբ Սույան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն հավելվածի։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման օրվա հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1
Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող,
առաջին տեղակալի
2024 թվականի ապրիլի 19-ի
թիվ 657-Ա որոշման

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չհավարարելու իրավական հիմքը | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| «Հակոբ Մոսյան» ԱՁ | 81501378 | Շիրակ, ք. Գյումրի, Պ. Սևակի 20/27 | բ. <u>որպես ընտրված մասնակից հրաժարվել</u> կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, | 19.04.2024 թ.<br>ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 658-Լ

«23» ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ՝ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԸ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով կրթության և մշակույթի բաժնի պետ Լ. Հակոբյանի զեկուցագիրը, «Կոմիտասի անվան մշատույթի պալատ» ՀՈԱԿ-ում ապրիլի 24-ին՝ Հայոց Մեծ եղեռնի հիշատակին օրը, «Ավետիս» լարային քառյակի համերգի կազմակերպման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 263.2 հազ. դրամ փոխանցել ԱՁ Էդուարդ Թոփչյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 659-Ա

«23» ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 9 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 17.04.2024թ. թիվ 38-Ա որոշումը և հաշվի առնելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան թիվ 1 շենքի բակում մեքենայի պայթյունից նյութական վնաս կրած թվով 9 բնակիչների դիմումները ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով.

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Կարճիկյան թիվ 1 շենքի թվով 9 բնակիչների հատկացնել 564910 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

# ՑՈՒՑԱԿ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 9 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «23» ԱՊՐԻԼԻ 2024Թ. ԹԻՎ 659-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

| | Ազգանուն, Անուն, Հայրանուն | Անձնագրի N | Գումար |
|---|---|---|---|
| 1. | Մանուկյան Եվգենյա Հովհաննեսի | AR0657836 | 20200 |
| 2. | Ղազարյան Անժելիկա Հրազդանի | AS0355742 | 40200 |
| 3. | Թումասյան Ղազար Զորկինի | AT0477432 | 57285 |
| 4. | Պողոսյան Գոհարիկ Արմենակի | AT0698378 | 60300 |
| 5. | Պետրոսյան Հասմիկ Կարապետի | AL0470470 | 65325 |
| 6. | Մուրադյան Սերգեյ Աշոտի | 008022428 | 80400 |
| 7. | Հովակիմյան Գևորգ Վանուշի | AU0597092 | 80400 |
| 8. | Մուխսյան Կարինե Մուրադի | 015292980 | 80400 |
| 9. | Սարգսյան Անահիտ Հրանտի | AL0283301 | 80400 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 564910 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Թ Ի Վ 660-Լ

«23» ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 109-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով, ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակության օրը, Կոմիտաս վարդապետի հուշարձանի և Մայր Տաճարի բակում Աղոթքի և ուխտի խաչքարի առջև ծաղիկներ խանարհելու և ծաղկեպսակ դնելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 65.0 հազ. դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 661Ա

23 սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԻՍԻ-ԼԵ-ՄՈՒԼԻՆՈ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլինո փողոցի թիվ 7 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Հրաչ Պետելի Սարիբեկյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 01.08.2005թ. տրված թիվ 1988043 սեփականության վկայական և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հացեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 049993CLTTAW / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլինո փողոցի 7/2 հասցեում գտնվող արտադրամասի և հողամասի նպատակային ու գործառնական նշանակությունները փոփոխելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլինո փողոցի թիվ 7/2 հասցեում գտնվող 0.0282հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշման պահանջներին և համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսի-Լե-Մուլինո փողոցի թիվ 7/2 հասցեում գտնվող արտադրամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի տան, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 662-Ա

23 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսի Լե Մուլինո փողոցի թիվ 7 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ՝ Հրաչ Պեստելի Սարիբեկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսի Լե Մուլինո փողոցի թիվ 7բ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1988043 տրված՝ 01.08.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 049993CLTTAW/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Իսի Լե Մուլինոյի փողոց թիվ 7/2 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6634Ա

23 ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.02.2024Թ. ԹԻՎ 245Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 28.02.2024թ. թիվ 245Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

եզրափակիչ մասում նշված 1 309 698 / մեկ միլիոն երեք հարյուր ինը հազար վեց հարյուր իննսունութ/ բառերի փոխարեն կարդալ « 1 319 658 / մեկ միլիոն երեք հարյուր տասնինը հազար վեց հարյուր հիսունութ/ » բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 664Ա

23 սեպտեմբերի 2024թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մեխակյան փողոցի թիվ 66/1 տան բնակիչ՝ Անդրանիկ Պարգևի Եղիազարյանի դիմումը, իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 21102019-04-0013 տրված՝ 21.10.2019թ., «Ավագ Ավագյան Գագիկի » ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 21.02.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04025KU9ZLVQ, 04025CQGZ7LD, 04999XQWKDBU/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մեխակյան փողոցում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ.Մեխակյան փողոց, թիվ 66/3 բնակելի տուն:

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Մ.Մեխակյան փողոց, թիվ 66/2 բնակելի տուն:

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Մ.Մեխակյան փողոց, թիվ 66/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 665Ա

23 սեպտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 տան բնակիչ Նաթելա Վարդգեսի Բազոյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 04.05.2004թ. տրված թիվ 1133757 սեփականության վկայականը, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244 կողմից 08.11.2022թ. կազմված հատակագիծը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022TTZQKS / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 271քմ / 271քմ արտաքին, ներքին 216.8քմ / մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունը օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 12.01.2023թ. կայացված թիվ 14Ա որոշմամբ սահմանված օրինականացման վճարը չի վճարել ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, գտնում եմ, որ պետք է կայացնել նոր իրավական ակտ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջների:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 271քմ / 271քմ արտաքին, ներքին 216.8քմ / մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 271քմ / 271քմ արտաքին, ներքին 216.8քմ / մակերեսով բնակելի տան և օժանդակ շինության օրինականացման համար սահմանված 453 383 / չորս հարյուր հիսունհերեք հազար երեք հարյուր ութսուներեք / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 666Ա

23 ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արաքս համայնքի Մեծամոր գյուղի Վ.Տերյան փողոցի թիվ 2 տան բնակիչ Սուրեն Հովհաննեսի Մխիթարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 27.12.2023թ. տրված թիվ 27122023-04-0052 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 4/60 հասցեում գտնվող խանութին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.0003հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով:

Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 4/60 հասցեում գտնվող խանութին կից համայնքային սեփականություն հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լիդիցեի փողոցի թիվ 1/5 հասցեում գտնվող 0.0003հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային արժեքով օտարել Սուրեն Հովհաննեսի Մխիթարյանին, որը կազմում է 13 326 / տասներեք հազար երեք հարյուր քսանվեց / ՀՀ դրամ:
2. Սուրեն Հովհաննեսի Մխիթարյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ ... ВАГАРШАПАТ
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 667-Ա

23 ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 35 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

